

12. — Պատմութիւնը՝ գիտութիւնն է. — Անգլիացի մը, Կոլտուին Սմիթ, Ամերիկայի Պատմական Հանդիսին մէջ, կը պաշապանէ թէ Պատմութիւնը՝ գիտութիւն չէ, ըստ որում մարդկային կամքը՝ որ անոր մէջ գործող գլխաւոր պատճառն է, փոփոխական և անհաստատ բան մ'է: Իւր կարծիքը՝ միայն պատմաբանն փոխափայտութիւնն է գիտութիւն:

13. — Ողիտականի աշխարհագրութիւնը. — Վիկտոր Պէրտր գաղղիացին՝ Միջերկրականի ափանց վրայ ուղեւորութիւն մ'ընելէ վերջ, հրատարակած է Ողիտականի աշխարհագրութեան վրայ ստուճասիրութիւն մը: Դա կը համարէ՝ թէ Փիւնիկեցի նաստաիւներ ուղեգիրք (Guide) մ'ունէին, որ Հոմերոսի ձեռքն ընկած է և անոր աղբիւր եղած: Կարծիք մը՝ եզական, բայց ոչ բւրրոյին գուրկ հաւանականութիւնն է:

14. — Խոսարական գրականութեան ուղեցուցիչներ՝ գերմանականին վրայ. — Չարմանալի պիտի թուի բռնէ՝ թէ Գերմանական խոր մտածութիւնը, երբեմն աշակերտած է իտալականին: Էտտիկ Վակնէր, Թաստօի վրայ ստուճասիրութիւն մը գրելով՝ Շիլլէրի Jungfrau von Orlean Թաստօի կրթիկնային կը նմանցնէ: Շիլլէր, Թիք, Նովալիս, Պրէնթանո, Բլայնթ, և այլն, հեռուողներն են Թաստօի: Գաղղիացի մ'ալ կարսլոս Քապին, առանձինն գրքով մը կ'ու-

ստուճասիրէ Խոսարացի Giambattista Marinotti աղեցեցութիւնը գաղղիացոց գրականութեան վրայ ժէ գարուն մէջ:

15. — Հայերը՝ ժՁ դարու Խոսարացի հեղինակի մը մէջ. — ժՁ գարուն Giovanni Botero անուամբ հեղինակը, կրօնքնիբու վիճակագրութիւնը գրած է, որ Հայոց համար կ'ըսէ. « Ասոյ մէջ կան Հայեր, շատ բազմաթիւ, Մելիթիներն քիչ մը նուազ, երկու պատրիարք ունին. Մեծ Հայոցը կը նստի Էջմիածնին մէջ, Երեւանի մօտ. իսկ Փոքր Հայոցը՝ ի Միս Գարամանիոյ: Անոնցմէ շատերը կարմիր Ռուսաստանի մէջ կը բնակին »: Խաւրիոյ Աշխարհագրական բերքը որ այս գրութիւնը հրատարակած է, Հայոց վիճակագրութիւնը կ'ընէ: — Ըստ իրեն՝ Հայերը երկու միլիոն են միայն, և ասոր ի վկայութիւն կը կոչէ Մարինէլի (Բ, 151) Պալպի (Ա, 77). իսկ ըստ Ֆուանիէի, Հայերն են միայն 1, 690, 000:

16. — Ինքնաշարժ անիւի սպասոյն. — Փարիզու մէջ այսուհետեւ ինքնաշարժ անիւր պիտի կատարէ սուրհանդակի պաշտօն: Ինքնաշարժ անիւ մը յորինուած է նաեւ՝ մի քանի բուլգի մէջ փողոցները աւելելու և թրջելու համար: Վերջապէս պատերազմի ժամանակ ինքնաշարժ անիւով պիտի փոխադրուին թղանոթները:

Հ. Ա. ՅԱՎԱԹԵԱՆ

ԱՆՈՒՇ ԶԱՅՆՈՂ



Ո՛րքան ծայեր անուշ եկան ինձ աշխարհիս երեսին,
Սակայն մէկ օր, մէկ տարի, մէկ դար ... եւ յետոյ վերստին
Անուշ կարծուածքն դառնացան, ու մերէն թոյն բլխեցին . . .

Գերեզմանիս մէջ կը հանգչիմ արդ . . . եւ կարգաւ՝ մի սու մի՛
Այցելուեման եկան ինձ հայրս եւ մայրս ու եղբայր սիրելի,
Քոյրս՝ ամուսնոյս հետ թեւախառն, եւ որդիքներս անկալի:

Ո՛րքան անուշ էր ծայերնին . . . բայց հեռացան . . . չեմ լրսիր.
Անուշ ծայերն անհետացան բոլոր . . . Մի՛ ծայն միայն էր,
ԱՆՄԱՃՈՒԹԵԱՆ ծայնս՝ որ անուշ հրնչէր, ու բնաւ չըզատուէր:

Հ. Ա. ՏԻՐՈՅԱՆ